

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի այցը Արագածոտնի մարզ

Մարտի 17-ին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյան, փոխմարզպետ Մուշեղ Աբգարյանի ուղեկցությամբ, իր աշխատանքային այցը ՀՀ Արագածոտնի մարզում սկսել է Թալին քաղաքի Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոցից, որտեղ ծանոթացել է մարզադահլիճների վիճակին:

Նախարարը եղել է Թալինի մարզադպրոցում, որտեղ իրենց մարզումներն են անցկացնում նաև «Սևան» ՄՅԿ-ի Թալինի մասնաճյուղի ըմբշամարտի խմբերը, այնուհետև Քուչակի Միհրդատ Ասատրյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում, Ապարանի քաղաքային համայնքի և Աշտարակի մարզային մանկապատանեկան մարզադպրոցներում ծանոթացել է դրանց շենքային պայմաններին, առկա մարզագույքին, մարզումների կազմակերպման գործընթացներին, ինչպես նաև դրանց խոչընդոտող խնդիրներին:

Նախարարը հարգանքի տուրք է մատուցել մարզի զոհված ազատամարտիկներին՝ ծաղիկներ դնելով նրանց հիշատակը հավերժացնող հուշակոթողին: